

ԳԼՈՒԽ ԻԲ

Թեոդորոս Ռշտունի իւր անուանակից Թեոդորոս Երիզացուոյ յունաց արեւելեան բանակի սպարապետին գալստեան կը սպասէր, եւ մեծ յոյս ունէր, որ Վարազտիրոց Բագրատունի նաեւ, որուն հաքսորանաց դարձի հրովարտակն ելած էր՝ միատեղ դառնար Յայաստան ընտանեօք, եւ այն ժամանակ իւր ամէն խորհուրդներն ի գլուխ հանել կը դիւրանար առանց շփոթութեանց եւ արիւնահեղութեան: Այն ձմեռուան սկիզբն, իւր Վարդ որդին Սիւնեաց Օրիորդին հետ, նշանեց եւ խումբ մը զօրքով Սիւնեաց եւ Աղուանից օգնութեան դրկելով ի Դարանդ՝ մնացեալ զօրքը Ատոմ Շահունիի հետ արձկեց ի Ռշտունիս, Ազգին մէջ եկեղեցականաց եւ աշխարհականաց անկարգութիւնք յաճախեալ լինելով՝ ժողով կարգեցին Ներսէս կաթողիկոսի հետ ի Դուին, ուր բազմութիւն եպիսկոպոսաց եւ իշխանաց գումար եալ կանոններ սահմանեցին բարեկարգելու համար եկեղեցին, սանձահարելու անիդիսանութենէ առաջ եկած անկարգութիւնքը, ուր Թեոդորոս կը ջանար ժողովականիսց ոգին իմանալ եւ պատրաստել թէ ո՞ր աստիճանի կրնային իր դիտաւորութեանդ յարմարիլ:

Փոքրիկ գունդ մը հետն առած Այրարատ, Գուգարք, Տայք շրջան ըրաւ, անտից եկաւ Բարձր Յայոց նահանգը, մտաւ Կարին: Յոն հասաւ եւ իմացաւ, թէ Մարտինէ եւ Երակլեակ աթոռնն իյնելով, Կոստանդ իւր հօր տեղ թագաւորեր էր, եւ զթեոդորոս Երիզացի պահեզով Թումայ անունով զօրավար մը նորա տեղ անուանէր էր, եւ թէ Բագրատունի Ասպետը շատ պատուով ընդունուէր էր կայսրն ի մայրաքաղաքն: Եւ անմիջապէս սուրհանդակ մը դարձեալ կ'իմացներ նամակաւ Թումայի կայսերական բանակի ընդհանուր սպարապետի կողմէն՝ թէ հասնելով Տրապզոն եւ արդէն հրամայած լինելով բոլոր Փոքր Ասիոյ զօրաց եկեղեայ գաւառը ժողովիլ, շատ քաղցր խօսքերով եւ մեծ գովութեամբք Թեոդորոսի քաջութիւնքը բարձրացնելով փափագ կը յայտներ իրեն հետ խորհրդակցիլ եւ պատերազմը ըստ այնմ կարգազել: Նոյնպէս նամակը յիշատակութեան արժանի կը համարէր Պրոկոպիոսի յիմար յանձնապաստանութիւնը, որ քանի մը տարի առաջ արհամարհելով հայ զօրավարին իմաստուն խորհուրդները, այնպիսի պարտութեան դիպելով հռոմեական պատին ու դրօշակները, նախատէր էր եւ երկրին աւերակաց ու կործանման պատճառ էր եղի կիմարներ նաեւ թէ նոր կայսրը զթեոդորոս Երիզացի չուզելով հեռացնել անձէն՝ նորա խորհրդով զթումայ ընտրէր էր այս պաշտօնին եւ յոյս ունէր թէ սիրով եւ միաբանութեամբ գործելով միասին մեծ փառաց պիտի հասնին թէ՛ ինք եւ թէ՛ հայոց զօրավարը: